



246. ԹԱՅԱՆ ՀԱՐՍԸ

Մէ մարդ ու կնիգ են ըլնում: Մերացել են, մի տղա ունեն:
Ասում ա.—Պե՛ր, տղային պսակենք:

Ասում ա.—Պսակենք:

—Պա ո՛ւմ ախշիկն առնենք:

Ասում ա.—Մտիկ եմ տալի՝ մեր կյուղում էնպես խելոք մարդ
չկա: Ամենախելոքը տերտերն ա, արի կնանք, տերտերի ախշիկն
առնենք:

—էթա՛նք, տերտերը խելոք ա, գրագետ մարդ ա:

Տերտերի հետ խոսում են, տերտերի ախշկանն առնում են:
Պերում են տուն: Դե, էսօր հարս ա, թաղա ա, էգուց, մյուս օրը
կլավանա: Հա՛, հա՛, իրեք օր, շորս օր անցնում ա: Հիմի, տունը
ճուր շկա, թոնիրն էլ վառել ա կիսուրը, կաղանն էլ էրվում ա:

Մարդը կնգանն ասում ա.—Ա՛յ կնիգ, ախր, կաղանն էրվը՛մ
ա, ճուր շկա, թո տանեմ, մի վեզրո ճուր պերեմ:

Կնիգն ասում ա.—Չէ՛, այ մարդ, ամոթ ա, ես ըստեղ, հարսն
ըստեղ, տու տանեա ճուր պերեմ: Թո, ես տանեմ:

Մարդ ու կնիգ կուլում են՝ էն ասում ա՝ ես տանեմ, կնիգն
ասում ա՝ ես տանեմ:

Հարսը վեր ա կենում, ասում.—Ա՛յ հերն ու մեր, ընչի եք
կուլում, հերթ արեք, ամեն մեկդ մե անգամ կնացեք, պերեք:

Ա՛յ քեզ թաղա հա՛րս:



